ԿՈՐԱԾ ՅՆՈՐՔՆԵՐ

Հեծում է մրրրիկն իմ դալար հովտում,
Թոշնել են, թոռմել ծաղկունքն իմ սիրած,
Զրմեռ է այնտեղ, ձրմեռ՝ իմ սրրտում,
Ու լալիս եմ ես ծաղկունքրս կորած։

Ես ձեզ եմ լալիս, հոգուս ծաղիկներ,
Էյ, իմ վաղուցվան սիրուն ցընորքներ,
Եկէք, ետ եկեք, մի անգամ կրրկին
Կյանքով, բուրմունքով լրցրեք իմ հոգին։

Բերեք առաջվան աշխարքն ինձ համար –
Արևի շողեր, գարունքվա դալար,
Ջրրերի կարկաչ, հավքերի երամ,–
Իմ հույսերն անհուն, իմ սերն անթառամ
Եվ իմ սիրուհին, որ միայն դուք գիտեք,
Եկէք, ետ եկէք։

Ձեզ ո՞վ հալածեց, ո՞ր դաժան քամին,
Ո՞ր չար թրշնամին –
Շընչում է մրրրիկն իմ անուշ հովտում.
Թոշնել են վաղուց ծաղկունքն իմ սիրած.
Զրմեռ է այնտեղ, ձրմեռ՝ իմ սրրտում,
Ծաղիկ ու ցընորք – բոլորը կորած...